

զան շօր կողմէն, և եթէ որակառու
թիւն մ' ալ գտնուի, այն ալ չէ թէ
որ երաժիշտ չկայ, այլ պատճառը ազ-
գային հին ակսոս մ' է ։

Այն է՝ երաժիշտներնիւ աւելող
ազգէն քաջաբերուած չեն ըստ օրինի-
կրաժշտութիւնը ցայսօր զգիւնք կը
կրէ մեր ազգէն ։ Իւր արժանաւոր
վարձքն ու քաջաբերութիւնը վայելած
չէ ։ Վասն զի դեռ ազգն ալ ձանձրած չէ
նորա արժանիքը, դեռ չէ ձանձրած
թէ « Լրաժշտութիւնը բանասիրու-
թեան քայրն է ու առանց միայն միւսին
կենանքը տխուր է եւ կիսակենդան,
դեռ չը գիտցաւ թէ բանասիրութիւ-
նը մարդուս զգացում տուած ատեն »
երաժշտութիւնն ալ չունչ և հոգի կու-
տայ ։ դեռ չիմացաւ որ բանասիրու-
թիւնը հայրենեաց ձանապարհը սոր
վեցուցած ատեն ։ Երաժշտութիւնն
ալ հոն քայլ առնել կուտայ, երաժըշ-
տութիւնէն աւելի հաւատարիմ բարե-
կամ չը կայ մարդուն, որ վշտաց վըշ-
տակից ։ Ուրախութեանց ուրախակից
և խիստ ալ գաղանապահ է ։ չգիտցաւ
թէ բանաստեղծին հեղինակութեան
սրբագրիչն է առ ։

Ի՞նչ իրաւունք է ։ ուսմանց ամէն
կարգին ու մասանց հարցաքննութեան
արդիւնքը և նօթը նշանակել, ասորը
ոչ ։ անոնց մրցանակը տալ, ասորը ոչ ։
ինչո՞ւ տղան մանր ուսմունքի քննու-
թիւն տայ և ասոր չտայ ։ Եթէ առա-
ջինը բրիտոննութիւն եւ հաւատք
կուտայ, աս ալ անոր խունկ սրտի
պատրաստել կուտայ ։ ափսոս, չէր
գիտեր Էտ կ'երթանք, եթէ յառաջ
'կայնպէս երաժշտի մը հետ վանքը ի-
րեն սեփական նկարիչ մ' ալ ունի
որ բուական նուրբ երեւակայութիւն
և վարժ ու հմուտ ձեռք ունի, որոց
ծնունդն է նաեւ սահմանադրութիւն
կոյսը և ուրիշ մէկ քանի գիւտեր ու

վարպետաշէն բաներ, սակայն ըկ Լ
սայի Երբաղանին քաջաբերութեամբ
բան չըլլար, որչափ որ ազգին հանրու-
թիւնը գիտնայ և խրախուսէ ։ և մեր
խուզած էական կէտն ալ այս է հոս,
որ մեր ժողովուրդը ասոնց յարգն ու
արժէքը չէ զգացած ։ Վասն զի մեր լը-
րագիրք ասոնց վրայ տակաւին խօսիլ
չեն սկսած, չեն ձանձրուցած ։ որով
պատճառ կ'ըլլան ասոնց վնասութեւ
և արուեստին կամ գիտութեան ազ-
գին մէջ մեռնելուն (1) ։

Այն ազգը Լըրպացոց արտաքին
ձեռն կապիկն է, անոնց յառաջագի-
մութեան կեղեւը միայն ունի, իսկ
հիւթն ու ոգին 'ի բաց թողուցած է ։
Վիսոս ։

յետաւորէմ
1869, ապրիլ 9

ԹԱՌՈՒԼ

ԺԱՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹ

« Ուրախութեամբ սրտի կը լըսեմք որ
Օ միւսնից ոտը Ստեփանոս եկեղեց-
ւոյ Լազերեցութեան պաշտօնը Չի-
վիճեան Լրժանապատիւ և խոհմու-
ղարդ Տէր Յովհաննէս քահանային
յանձնուելով, փոխանակ Լրժ. Տէր
Գէորգ քահանային, որ իւր ծերութե-
ն շարունակ տկարութեան պատճա-
ռաւ հրաժարած է ։ մեծ եռանդ կ'
նախանձաւորութիւն տիրած է քահա-
նայական խմբին, որոնք հաւաքուե-
լով բաց 'ի քանի մի կանոններ հաստա-
տելէ իրենց պաշտօնին վերաբերեալ ։
այլ և ընթերցարանի սենեակ մի հաւ-
աստներ են յիշեալ եկեղեցւոյն մէջ ուր
կ'ընդունին առ սցժմ քանի մի տեսակ

(1) Մըթ Թեպետ յատուկ տեւաբկա խօսե-
լու պատրաստուած էինք վաղուց ասոնց նկատմամբ ։
բոց տանը եկաւ հիւսկուքն երկու խօսք ընդու

աղգային լրագիրներ, և կը փափաքեն նաեւ կրօնական և բարոյական գրեւանց հաւաքածոյ մի ևս ձեռք բերել շնորհիւ բարեպաշտ աղգայնոց :

Քահանայական խմբի մի առաջին անգամ յուսած սոյն կրօնասիրական և բարոյական շարժումը մեծ պատիւ կ'ընէ Ս. Սիւրենիոյ հայ հատարակութեան, և կրնայ բարի օրինակ լինել նաեւ ուրիշ հայրենակ քահանայից, վասն զի գիտեմք ստուգիւ և փորձիւ՝ որ եկեղեցականաց օրինակը աւելի ալիւքցուածիւն և տպաւորութիւն ունի աշխարհական և առմիկ ժողովրդէան սրտին և մտքին վերայ, թէ 'ի մարտիւն և թէ յառաքինութիւն :

— Ըմոյս 9ին Վեր. Գալաթեան Սարգիս Սրբազանը մեծ յարգանք ընդունուեցաւ, որուն մինչեւ (Յոպպէ, որ է իջ ժամու միջոց, երկու օր յառաջ գիմաւորելու գացած էին մէկ քանի վարդապետներ և մինչև քանի մը ժամուան ճանապարհն ալ ուրիշներ, որոնք ճանապարհի մէջ իրարու և Սրբազանին ու իրեններուն հետ միանալով շքեղութիւն մը կազմած էին իսկ վանքի մէջ մնացածները բաց 'ի Սրբազան Պատրիարք չորմէն, Ս. Զակով բայ դուռը գիմաւորելով յարգանք առաջնորդեցին 'ի Ս. Գլխադիր եւ անտի ժառանգաւոր աշակերտաց քաղցրանուագ երգերով դէպ 'ի Պատրիարքարան, ուր Պատրիարք չոր հետ սիրով ողջագուրեւէն և փոքր տեսութիւն մ' ընելէն յետոյ հանգիստ ըրաւ իրեն համար յատուկ պատրաստուած սենեակը :

— Դմանօրինակ մեծարանք և ընդունելութեամբ, ամսոյս 18ին, Սուրբ Լ. Թոռս ժամանեցին Վեր. Իգնատիոս և Սիմէօն Սրբազան եպիսկոպոսները :

— Լ. Թոռոյս Լ. Ժ. միտքան Լստուա

ճատուր վարդապետը հետեւեալ կը գրէ մեզ Լ. Գլխապետէն. « Ընդհոյ Վերնեալ Կոնստանտնուպոլսի յարուկ լուր ղրկելով իւր թարգմանին հետ տեղւոյս առաջնորդարանը՝ եկաւ մեզի ուղեց, գնացինք եւ սա հետեւեալ խօսքերը առաջարկեց մեզ. — Վեր. Խաչակ եպիսկոպոսին եւ իւր ընկերներուն Հապեշատանի որ սահմանի մէջ ըլլալը գիտէք. — Պատասխանեցինք որ իրենց մէ եկած մէկ նամակէն կը ստուգենք թէ՛ Պելեոս գաւառին մէջ են, բայց վերադառնալու համար ոչ ճամբայ կայ, ոչ դրամ և ոչ հանդերձ, այնպէս յետին խոշորութեան մէջ մնացեր են ր և այլ մեր գիտոյածը խօսեցանք. — Պատասխանեց Վերնեալ թէ՛ Տէրու թեմէն մեզի յատուկ հրաման կայ՝ որ այդ մարդկանց բոլոր ծախքը եւ պիտոյքը հոգալով՝ մարդ ղրկենք բերել տանք, 1000 բալ ճամբու, ծախք : Եւ գլխապետի կառավարութեան կողմէն յատուկ մարդ և այլ պիտանի եղածները, և մեզի ալ հրաման ըրին որ իւրաքանչիւրոց երկու խաթ ղգեստ պատրաստենք, որոց դրամը իրենք պիտի հատուցանեն : Սէնք ալ յատուկ ցանկ մը շինելով՝ գլխի ֆեսէն սկսեալ մինչեւ ոտքի կնիգուրան իւր արօքն պատրաստել կուտանք, ութ օրէն վերջը (10՝ Նորիկ) պիտի լրանայ ամեն բան և ճամբայ պիտի ելլան Հապեշատան գացողները » :

— Եւ արդի թէ՛ Հայոց եւ թէ՛ այլ քրիստոնեայ աղգաց ուխտաւորները առաւել բազմութիւն էին քան անցած տարուանը. բայց գոհութիւն Լստուոյն որ տօնական հանգէսները կատարուեցան ամենայն խաղաղութեամբ : Վաճառոյս ենք որ այսուհետեւ խաղաղութիւնը կամաց կամաց պիտի ախրէ այն նուիրական տեղեաց մէջ, որոնք երբեմն արիւնհեղութե

եւ խռովութեան վայրեր կը փոխար-
կուէին 'ի նախատինս 'Քրիստոնէսու-
թեան : Այս խաղաղական յուսով մը
խիթարուած քաղցր պարտք կը համա-
րի Ահմը շնորհաւորել 'Քրիստոսի յու-
սալիր (Յարութիւնը և բոլոր Հայոց
Ազգին համար մաղթել կատարեալ
յարութիւն 'ի թմրութենէ քարու
թիւն 'ի տգիտութենէ քարութիւն
'ի նիւթական և 'ի բարոյական մեռե-
լութենէ :

ԳՈՒՄԱՐ ՆԱԽԻՔ

(Շարունակութիւն, տես թիւ 2) :

13. Արաբացի զինուոր մը իւր զօ-
րապետին ձիուն վերայ պատահելով՝
ձիուն սանձէն բռնելով պանիկայ կա-
նեցուց և հարցուց անոր թէ ձիուն
գինը քանի է : Օրապետը տեսնելով
անոր ինչ վիճակի մէջ ըլլալը, տուն մի
տանել տուաւ և այնտեղ պառկեցու-
ցին, միւս օր առաւօտը զօրապետը
գնաց այնտեղ հարցնելու թէ ձիուն
քիչ կուտայ, սթափած զինուորը պա-
տասխանեց, տէր իմ, այն որ երեկ ե-
րեկոյն ծախսու առնել կուգէր, այս
առտու կանուխ ելաւ գնաց :

14. Անմիտ երիտասարդ մի որ ա-
մենեւին կարդալ չէր գիտէր, գեղե-
ցիկ գիրք մի պարգեւ ընդունած էր,
զայն ցոյց տալու համար եկեղեցին
տարաւ և կարդալ կը ձեւանար մեծ
ջերմեռանդութեամբ, դժբաղդաբար
երիտասարդ մի որ անոր ետեւի կող-
մը կանգնած էր, տեսաւ որ գիրքը գլ-
խիվայր բռներ է, ըսաւ անոր. պարոն,
կ'աղաչեմ թողութիւն շնորհէ համար
ձապութեանս որովք զի կը հարցնեմ,
ինչու համար գիրքդ գլխիվայր բռներ

ես : Պատասխան տուաւ անմիտ երի-
տասարդը. ցախիկ եմ :

15. Բժիշկ մի իւր ներքին սենեկին
մէջ շատ զբաղած ըլլալով, տեսաւ որ
պղտիկ աղջիկ մի մոտաւ այն տեղ կը
բակ ուզելու, բայց բժիշկը ըսաւ ա-
նոր թէ կրակը տանելու համար բան
մի չունիս. և անօթ բնութելու ատե-
նը, պղտիկ աղջիկը կրակարանին մօ-
տեցաւ քիչ մի պաղ մօխիւր առաւ իւր
ձեռաց մէջ և քանի մի կրակ գրաւ վը-
րան, բժիշկը ասոր վերայ այնչափ
զարմացաւ որ իւր գիրքերէն մէկը գե-
տինը ձգեց ըսելով թէ՛ իմ բոլոր գի-
տութեամբս չի կրցայ այս բնական
հնարքս գտնալ :

16. Անուական մի քանի մի ժա-
մանակէ 'ի վեր իւր ընտանիքէն հե-
ռացած ըլլալով՝ իրեն մօտ տեղերէն
գիաղացի մը պատահեցաւ, այլ և այլ
հարցմունքներ ընելէ վերջը, իւր գա-
ւառին վրայօք ալ հարցուց թէ յա-
ռաջուան պէս շատ խենթեր կան այն
տեղ : Արաւի չէ պարոն, պատասխան
տուաւ գիւղացին, ձեր հոն եղած
ժամանակին չափ չկայ, Անուականը
խօսքին ուր դաշկը իմացաւ, չէ թէ
միայն չբարկացաւ, հապա ըսաւ գիւ-
ղացիին՝ կարծեմ թէ դուն անոնցմէ
ըլլալու չես :

17. Անուական մի իւր սենեկապե-
տին հետ ճամբայ ելաւ. սենեկապե-
տը գրաստին վերայ քնանալով իւր
տիրոջ վերարկուն կօրնցուց, ազնու-
ականը գլուխը դարձունելով տեսաւ
անոր ձիուն վրայ երերալը, և իւր վե-
րարկուն ամենեւին չտեսնելով, իւր
դժգոհութիւնը յայտնող սաստիկ ձայ-
նով մը անգամ մի կանչեց, Յօհաննէս
ուր է իմ վերարկուն, և գրաւ կը բռ-
նեմ որ դուն կօրնցուցիր : 'Կառայն
չը տեսնելով զայն՝ ըսաւ ես գրաւ չեմ
դներ տէր իմ, վառն զի ապահով եմ